

մը նշմարեց , որ իրեն կ'երևար թէ գաւ գաթը կը տանէր : Խնջաւ Շ ամունի , ու Շագգար անունով մէկուն խմացուց այս գաղտնիքը . և որոշեցին որ մէկ տեղ ուրիշ անգամ մըն ալ սպան փորձն ընեն : Պալմա սնոտի յուսով խաբուած չէր . յաղթուեցաւ Ապիտակ Լ եռը , և ինչպէս որ հոսմէական կայսերք իրենց նուածած երկիրներուն անունները իրենց տիտղոս կ'առնէին , Պալմա ընդունեցաւ իր նախանձորդներէն նոյն լերան պատուանունը : Շայ անակնկալ լուրը մէկէն տարածուելով Օ ուիցերիոյ ու Ապայայ մէջ , մեծ ուրախութիւն պատճառեց ամենուն . և անկէ վերջը շատերը Ապիտակ Լ երան գլխէն տարածեցին աշուընին ընութեան վրայ :

ՏՆՏԵՍԱԿԱՆՔ

Ա.ՈՏՏՆԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Միս : (Տես երես 26)

Ի՞նչ աղջեցուելիւն ունին էնդանեաց մոխ վրայ տարի՞ն ու տնունդը : — Դրժուարին չէ ըմբռնելը թէ կենդանեաց մին որպիսութեանը վրայ ինչ ազդեցութիւն կրնայ ունենալ անոնց տարիքը : (Օրինակի համար , նորածին կենդանեաց միսը թոյլ կ'ըլլայ , մածուցիկ , եփուելու ատեն տկար ախորժահոտութիւն մը կը բուրէ , ուստի ընդհանրապէս անուտելի կը համարուին :

Շայ երբ այս հասակէն կ'ելլեն ու դեռ յարբունս չհասած , շատ կենդանիք փափուկ միս կ'ունենան , առանց թոյլ ըլլալու , և եփուելու ժամանակ բարակ ախորժահոտութիւն մը կը բուրէն : Եւ երբոր յարբունս կը հասնին , ումանք բոլորովին կը փոխուին , ինչպէս երբ հորթը եղն կամ երինջ կ'ըլլայ , և առաջինէն շատ տարբեր է ասոնց մաին եփուելու ատեն բուրած ախորժահոտութիւնը :

Շայ հասակն առնելէն ետե , արջա-

ոոց տեսակներէն ումանց կեանքը մէկ երկու տարի ալ երկարաձգելով , արդեօք անոնց միսն աւելի համով ու ախորժահամ կ'ըլլայ : Շայ կարևոր հարցմանս վրայ շատ գիտունք մտածեր են , և մասնաւորապէս մօտ ատեններս Շ ըլլակօյլ անունով գաղղիացի գիտնականը մեծ լոյս տուաւ : Հաւանական կ'երևայ թէ կենդանեացմէ ոմանք , ինչպէս եղներն ու կովերը , յարբունս հասնելէն ետե մէկ կամ երկու տարի գիրցնելով , համով միս կ'ունենան , որ եփուելով ախորժահոտութիւնները կ'ունենան . ուրիշ կենդանիները , ինչպէս ոչխարը , յարբունս հասնելէն ետե մէկ երկու տարի գիրցնելով , անոնց գործուածոց մէջ անհամեմատ կերպով առատ պարարտ նիւթեր կը զատուին , որոնք թրռչական պարարտ թթուներ կը բովանդակեն , որոնցմով մսերնին սաստիկ հոտ մը կ'ունենայ ու ուտելու անախորժ կ'ըլլայ : Կոյսազու ու այծու միսն ալ ախորժահամ է քանի որ ուլ են , բայց այս հասակս անցընելէն ետե գեռյարբունս չհասած մսերնին հոտ մը կ'ունենայ :

Շայ կենդանիք , որոնց միսը կ'ուտուի , որչափ հասակնին առնուն՝ այնչափ մսերնին իրենց աղէկյատկութիւննին կը կորսրնցընեն : Ինչպէս , օրինակի համար , այն եղները որ չորս տարուընէ կը սկսին լծուիլ ու ինչուան ութը կամտար տարի շարունակ կ'աշխատին , շատ գժուարաւ կրնան այնպէս գիրնալ՝ որ ուտուելու գան . վասն զի անոնց մկանական մին թելերը կը պնդանան ու գժուարաւ կ'եփուին , ևս առաւել ախորժով չեն ուտուիր : Կակ կենդանեաց տրուած ուտելիքը անոնց մին որպիսութեանը վրայ շատ ազդեցութիւն ունենալուն տարակոյս չկայ , թէպէտ և ինչուան հիմա եղած փորձերը բաւական չեն սեպուիր այս աղդեցութիւնը Ճիշդ որոշելու :

Շայ հորթերը որ լոկ կովու կաթով կը սնանին , նոյն իսկ ինչուան չորս ամսուան ալ ըլլան , տժգոյն միս մը կ'ու-

նենան, որ եփուելով կը ձերմըկի, և թեթև խորովելով ախորժելի հոտ մը կը բուրէ: Կավու տեսակի նորահաս կենդանիները վերջի երկու ամիսները չոր խոտով մնանելով, մսերնին ազօտ գոյն մը կ'ունենայ, և եփուելով թուխ կամ կարմրորակ գոյն մը կ'առնու, և խորովելով նոյն ախորժական հոտը չքուրեր:

Այս նկատմամբ շատ հաւանական կ'երևայ որ եթէ հորթերը ախորժահամու ախորժահոտ կաթով մնուցուին, ինչպէս է այն երինջներուն կաթը որ գեղեցիկ բնական մարդագետիններու մէջ կ'արածին, ան ատեն ասոնց միսը ալաւելի աղէկ կ'ըլլայ և ախորժական ուտելու:

Շատ հաւանական է որ սաստիկ հոտ ունեցող ուտելիքները, ինչպէս են կաղամբը, շաղգամի և ասոնց նմանիքը, եղանց, երինջներուն ու ոչխարներուն մնին վրայ շատ ազգեցութիւն ունենան, երբ մեծ քանակութեամբ անոնց կերակուր տրուելու ըլլան: Եւ այս ազգեցութիւնս զգալի կ'ըլլայ անոնց մսին որպիսութեանն ու հոտին վրայ, գոնեա շատ պարագաներու մէջ. ինչպէս օրինակի համար, եթէ ձագարներուն առաւելապէս կաղամբ տրուի կերակուր, մսերնին կաղամբի հոտ կ'ունենայ:

Ի՞ոյն բանը դիտուած է նաև հաւեղինաց վրայ, որ եթէ շատ օր վրայէ վրայ մասնաւոր միջատներ տրուին անոնց կերակուր, մսերնին անախորժելի կ'ըլլայ:

Կաթն ու սերը, կարագը և պանիրը նոյնպէս անախորժ համ մը կ'ունենան երբ կովերուն մեծ քանակութեամբ կաղամբ, շաղգամ կամ ձակնդեղ տրուելու ըլլան:

Դիտուած է որ այս այլ և այլ բուսական ուտելիքները, որ առանձին առանձին չափաւորապէս ալ աղէկ ըլլան, թէ որ իրարու հետ խառնուած տրուին կենդանեաց, շատ աւելի լաւ ազգեցութիւն կ'ընեն թէ անոնց մսին և թէ անոնց կաթին վրայ:

Փոխադարձաբար, եթէ սոյն կենդանիք գեղեցիկ բնական մարդագետին ներու այլ և այլ խոտերովն ու լեռնային քանի մը տեսակ հոտաւէտ բոյսերով մնանելու ըլլան, թէ մսերնին աղէկ կ'ըլլայ և թէ կաթերնին, սերերնին ու կարագնին ախորժահամ ու ախորժահոտ, ինչպէս նաև պանիրը ընտիր:

Ինչպէս այս կենդաննեաց, նոյնպէս անուշ ջրոյ ձկներուն մսին վրայ ալշատ ազգեցութիւն կ'ընէ զանոնք մնուցանող ջրոյն որպիսութիւնը. այն գետերուն ու ձերուն ջուրը, որ կենդանի ու ըմպելի է, անոնց մէջէն բռնուած ձրկներն ալ համով ու ընտիր են. ընդհակառակին ձահիձներու ու ձակներու տղմուտ ու անշարժ ջրոց մէջ բնակող ձկանց միսը զգալի հոտածութիւն մը կ'ունենայ և այնչափ ախորժելի չէ ուտելու:

Ի՞նչ մասնաւոր որպիսութիւններ ունին դուրը դիւրամարսելի ըլլալու: — Ունէ և կարելի ըլլայ բացարձակ կերպով ըսելու թէ միս մը դիւրամարսելի ըլլալու համար այս կամ այն որպիսութիւնը պէտք է որ ունենայ, վասն զի այս բանս կրնայ կախուիլ ուտողներուն մարսողական գործարանաց մասնաւոր վիճակէն, 'ի վերայ այսը ամենայնի ընդհանրապէս կրնանք ըսել թէ այն միսերը դիւրամարսելի են, որոնց համակցութիւնը տկար է կամ թէ շատ պինդ չեն, ուտեսի կրնանք հետեւեալ կարգն որոշել նելնեներէն սկսելով. ծովու ու անուշ ջրոց ձկները, հաւեղէնք ու թռչնեղէնք, երէ, խեցեմորթք, հորթ, գառն, եզ, ոչխար, խոզ, և կինձ: Խակ ծանը կամ դժուարամարսելի են, սալմոն ձուկը, օձաձուկը, բաղն ու ուրիշ ամէն ջրային թռչունները, ինչպէս նաև ծխած ու աղած մսերը:

Ի՞նչ աղդեցութիւնն ունի այլ և այլ մասնաւորասպութիւնը դիւրամարսութիւնն հատամայք: — Վիսերն այլ և այլ կերպով պատրաստելու հնարքներն ալ շատ կ'օգնեն անոնց դիւրամարսելի ըլլալուն:

Յառաջ քան եփելու զանոնք, պէտք է սպասել ժամանակ մը, որ ըստ բա-

րեխառնութեան կրնայ երկարաձգուիլ կամերագել . օրինակի համար , ձմեռը աւելի երկար ատեն պէտք է սպասել , այսինքն Զ օրէն մինչեւ 4 օր , ու ամառը աւելի քիչ , այսինքն 12 ժամէն ինչուան 24 ժամ , որպէս զի միսերուն գործուածոցը մէջ ինքնօրէն սկսուած հակազդեցութեամբ եղած քայլայմունքները կատարուին :

Այս նկատմամբ դիտելու պարագայ մը կայ , որ պէտք չէ զանց ընել : (Երինակի համար , եթէ կենդանին մորթելէն քիչ մը ետքը կամ թէ մէկէն միսը սառուցի մէջ դրուի , այսինքն զրոյէն 4° կամ 5° և կամ ալ աւելի վարեխառնութիւն ունենայ , ան ատեն անցած ժամանակը չսեպուիր , վասն զի մին հիւթոց սառելով վերն ըսուած ինքնօրէն հակազդեցութիւնները չեն սկսիր : Ուրեմն սառոյցը քակուելէն վերջը անցած ժամանակը պէտք է հաշուել թէ բաւական է արդեօք այն ինքնօրէն հակազդեցութեանց մին մկանանց թելերը քայլայելու . այս ժամանակը շատ երկարատեւ չէ , վասն զի սառուցմամբ մին մէջ դտուած հեղուկները պինդանալով ու սառելով՝ անոր մանրաթելերը մէկմէկէ կը հեռանան ու տեղերնէն կը խախտին , որով վերն ըսուած հակազդեցութիւնները դիւրաւ կը սկսին , և աւելի համով կ'ըլլան եզան ու ոչխարի միսը թէ որ սառելէն անմիջապէս ետքը խորովուելու ըլլան : Վսկէ կը հետեւի որ քանի մը տեսակ ձկանց կակուղ ու խոնաւ միսը սառեցընելով՝ չափէն աւելի կը կակնայ եփուելով ու շատ կամ քիչ կը գէշնայ :

Ի՞նչ աղցեցունէիւն ունի եփուելուն կերպ : — Ո՞խերուն եփուելուն կերպն ու աստիճանը մեծ ազդեցութիւն ունի անոնց որպիսութեանը վրայ իւրաքանչլուր տեսակին համեմատ : Ի՞նչէս , երբ առանց ջրոյ , այլ սոսկ բարեխառնութեամբ կ'եփուին , որ է ըսել կը խորովին , եզան ու ոչխարի մին մակերեւութիւն մօտ եղած մասերը շատ աւելի կը տաքնան , 100էն ինչուան 130° բարեխառնութիւն կ'ունենան , մինչ-

գեռ միջին մասունքները , որ մեծագոյն մասը կը կազմեն , հազիւ թէ 50էն 65° կը տաքնան : Այս երկու տեսակ մերն ալ փափուկ , հիւթալից ու համեղ կ'ըլլան հետեւեալ պատճառներուն համար . վասն զի գործարանաւոր գոյացութեց մակարդումը ու անոնց մակերեւութիւն մօտի գործուածոց կծկումը բաւական են արգիլելու ներքին մասանց շոգիացումը կամչորացումը . ասոնք մէջերնին գոտւած հիւթով կը կակնան , ու այնչափ բարեխառնութիւն կ'ունենան , որ բաւական է թելերը մէկմէկէ քակտել , ու մակարդել , միայն ըստ մասին , մէջերնին եղած բնասպիտակուցը , թողլով հեղուկին մէջ բնարիւնը , որով միսը կարմիր կը ներկուի , ու տալով անոնց ախորժահոտութիւն մը ու ախորժահամութիւն մը :

Ուրիշ շատ կենդանիք ալ , որոնց միուլ պինդ ու գունաւոր է , ինչպէս նապաստակները , ջրային , վայրենի ու ընտանի հաւերը , նոյն կերպ եփուելով նոյնպէս համով կ'ըլլան , ու այլ ե այլ ախորժահոտութիւններ կը բուրեն , որ իւրաքանչիւր տեսակին մասնաւոր են :

Հորթու մին ալ նոյնպէս եփուելով , որովհետեւ նոյն հոտաւէտ սկըզբունքները չունի , անոր համար տուած հիւթը այնպէս համով չէ . ուստի պէտք է աւելի եփել , այնպէս որ ներքին բարեխառնութիւնը ինչուան 90 կամ 95° համնի , որով վերին երեսներն աւելի խարկուելով թուխ կարմիր գոյն մը կ'առնուն ու մասնաւոր ախորժելի հոտմը կը բուրեն :

Լոյն բանն է նաև տնական ու որսի հաւոց ալ . ասոնք քանի որ մատաղ ու գէր են , այս կերպ եփուելով մսերնին չափաւորապէս կակուղ ու փափուկ կ'ըլլայ , և ամէն մարդ գիտէ զանազանելասոնք իրենց բուրած ախորժահոտութենէն :